Azg
armenian daily

26 ՄԱՅԻՍ 1995. ՈՒՐԲԱԹ # 97 (851)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ

Հօգուտ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության մասնակցությանը Ազգային ժողովի ընտրություններում

Մեր. Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության ներկայացուցիչները ՀՀ Ազգային ժողովի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հանձնեցին ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում հավասարական ընտրակարգով մասնակցելու համար հատատակական հարթակ կազմակերպություններից դահանջվող հարյուրացիների կողմից տրված ստորագրությունները: Հօգուտ ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում ՀՌԱԿ-ի մասնակցության, բազմահազար հարյուրացիների շարում իրենց ստորագրությունները են տվել նաեւ Սիլվա Կապուտիկյանը, Պետրոս Զեյթունցյանը, Կարլեն Դալլաքյանը, Սերգեյ Խորայելյանը, Էդուարդ Միրզոյանը, Լեւոն Հախվերդյանը, Յուրի Երզնկյանը, Լեւոն Միհիջանյանը, Հովհաննես Գրիգորյանը, Մանյա Ղազարյանը եւ ուրիշ շատ գործիչներ, արվեստագետներ ու հանրապետության ճանաչված անձնավորություններ:

ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ

Մինսկի գագաթաժողովը կխնայի ԱՊՀ կուտակված խնդիրները

Այսօր Բելառուսի մայրաքաղաքում իր աշխատանքը կսկսի ԱՊՀ անդամ պետությունների եւ վարչապետների հերթական գագաթաժողովը, որին մասնակցելու նպատակով երեկ երեկոյան երեւանից Մինսկ մեկնեց Հայաստանի դաշտիրակությունը նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում է նաեւ վարչապետ Հրանտ Բագրատյանը: Նա խաստեվում է, որ երկրների նախագահների ու վարչապետների առանձին հանդիպումներից հետո, տեղի կունենա համատեղ նիստ, որի ընթացքում կամփոփվեն գագաթաժողովի աղյուսները: Քաղաքական դիտորդները մեծ հույսեր չեն կապում այս գագաթաժողովի հետ, համաձայնելով, որ հարցերի շրջանակը ոչ այնքան կարեւոր: Որոշակի հետաքրքրություն եւ կարեւորություն ներկայացնում են թերեւս միջպետական տարադրամային կոմիտե ստեղծելու մասին եւ հատուկ նշանակության բեռներ ու ռազմական նշանակության արտադրանքի տեղափոխման հետ կապված հարցերը:

Կհնարկվի նաեւ մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների մասին ԱՊՀ կոնվենցիան, ԱՊՀ անդամ պետությունների մշակութային համագործակցության միջպետական կենտրոն ստեղծելու հարցը: Իսկ մայիսի 25-ին Մինսկում անցկացված ԱՊՀ երկրների սահմանադրական դատարանների նախագահների խորհրդաժողովի նիստում կհնարկվի ԱՊՀ ներքին սահմանի պաշտպանության պայմանագրի նախագիծը, ինչպես նաեւ ԱՊՀ անդամ պետությունների արտաքին սահմանների պաշտպանության հարցերը կներկայացվեն նախագահների նիստի ուշադրությանը: Գագաթաժողովում կհաստատվի նաեւ ԱՊՀ անդամ երկրների միջխորհրդարանական համագործակցության մասին կոնվենցիան:

Սղոսվում է Կազիմիրովի այցը Բահրեյն

Մայիսի 28-ին Բահրեյն է ժամանելու Ռուսաստանի հատուկ հանձնարարությունների դեսպան, հայ ադրբեջանական հակամարտության կարգավորման բանակցություններում Բորիս Ելցինի անձնական ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը: Ինչպես հայտնի դարձավ խաբար սերվիս գործակալության, դիվանագետը կծանոթանա հակադեցության գոտու իրադրությանը, կունենա մի շարք պաշտոնական հանդիպումներ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ Հելսինկիում հունիսի կեսերին նախատեսված բանակցությունների հերթական ռաունդի նախաշեմին:

ՍՆԱՐՔ ԻՍԱՊՐԵՍ

Վահան Փափազյանը ԱՄՆ-ից կմեկնի Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Բելգիա

Վաշինգտոնում ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը հանդիպումներ կունենա բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Սոիտակ տանը, Պետդեպարտամենտում (արտգործնախարարությունում), Կոնգրեսում, կմասնակցի նաեւ ԱՄՆ-ում Հայաստանի հանրապետության դեսպանության նոր շենքի բացման արարողությանը: Մայիսի 28-ին Վ. Փափազյանը կժամանի Փարիզ, որ մի քանի հանդիպումներ կունենա Ֆրանսիայի արտգործնախարարությունում, ինչպես նաեւ կմասնակցի Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության նոր շենքի բացման արարողությանը: Այնուհետեւ ՀՀ արտգործնախարարը կմասնակցի Նիդեռլանդների Թագավորության Նորդվիկում մայիսի 30-ին կայանալիք Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի (NACC) անդամ պետությունների արտգործնախարարների հերթական հանդիպմանը: Հունիսի 1-ին Բրյուսելում ՀՀ արտգործնախարար Փափազյանը հանդիպումներ կունենա Եվրոպական հանձնաժողովում եւ Եվրախորհրդարանում:

ՍՏ

ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը հուսով է, որ ԵԱՀԿ-ն կդաստարտի պայթեցումները

Իսկ Ադրբեջանը տարակուսանք է հայտնում

Հայաստան մեկող գագաթաժողի պայթեցումներին իր անմեղակցության մասին պաշտոնական Բաքվի հայտարարությունները վկայում են, որ Ադրբեջանում գոյություն ունեն այդ երկրի ղեկավարության կողմից չվերահսկվող ուժեր: Այդ մասին այսօր Երեւանում լրագրողներին հայտարարեց Հայաստանի վոխարտգործնախարար Վարդան Օսկանյանը:

Սակայն, նրա խոսքերով, առկա են անհերքելի վկայություններ, որ Վրաստանի տարածքում մայր գագաթաժողի պայթեցումներն իրականացնում են հենց Ադրբեջանի ներկայացուցիչները, որոնց բիկումիին կանգնած է պաշտոնական Բաքուն:

Փոխնախարարը հայտնեց, որ ապրիլի 11-ին ԵԱՀԿ անդամ երկրներին բաժանվել է փաստաթուղթ, որի հեղինակը Վրաստանում գտնվող ԵԱՀԿ խումբը, այդ հանրապետության ադրբեջանաբնակ շրջաններ էր այցելել գագաթաժողի հետ կապված իրավիճակի ուսումնասիրման համար: Փաստաթղթի համաձայն այդ շրջանների բնակչությունը բնական համակրանք է տածում Ադրբեջանի հանդեպ, իսկ վերջինիս բանակցողների հանդեպ ոչ: Ադրբեջանի մարդիկ մասնակցում են Հայաստանի դեմ ուղղված ահաբեկչական գործողություններին:

Հայաստանը ԵԱՀԿ-ից ցնծաղրեցնել ահաբեկչական հարձակումների հետագա կրկնությունների կանխման եւ բացահայտման պահանջում, որպես Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցություններին մասնակցելու պայման, հայտարարեց Օսկանյանը: «Մենք ակնկալում ենք, որ ԵԱՀԿ-ն լրացուցիչ խումբ կուղարկի Վրաստան գագաթաժողի հետ կապված իրավիճակի ուսումնասիրման համար, ասաց նա: Ավելին, մենք ԵԱՀԿ-ին առաջարկեցինք Վրաստանի ադրբեջանաբնակ շրջաններ գործուղել մշտական ներկայացուցիչ կամ ներկայացուցիչների խումբ գագաթաժողի վերահսկողություն իրականացնելու համար»:

Հայաստանը նաեւ ակնկալում է, որ առաջիկա օրերին ԵԱՀԿ-ն հանդես կգա այդ ահաբեկչական հայլերը դատապարտող հայտարարությամբ, ասաց Հայաստանի փոխարտգործնախարարը:

Մայիսի 24-ին Ադրբեջանի ԱԳՆ-ի տարածած հայտարարության մեջ ասված է. «Գագաթաժողի պայթեցմանն Ադրբեջանի ունեցած առնչության վերաբերյալ Հայաստանի ԱԳՆ-ի հայտարարությունն առնվազն տարակուսանք է հարուցում: Նախ Ադրբեջանի Հանրապետությունը պատասխանատվություն չի կրում այլ պետության տարածքում կատարված իրադարձությունների համար: Երկրորդ Ադրբեջանը, որը ոչ միայն ՀՀ-ի ագրեսիայի, այլեւ բազմաթիվ ահաբեկչական գործողությունների օբյեկտ է դարձել, որոնց հետեւանքով ազանվել եւ հաշմանդամ են հարյուրավոր խաղաղ բնակիչներ, ընդգծից դատապարտել է եւ դարձյալ դատապարտում է միջազգային հանրության միջոցով հակամարտության խաղաղ կարգավորման ընթացքում միջազգային հանրության միջոցառական ջանքերին խոչընդոտելու եւ Ադրբեջանի նկատմամբ իր գավթողական հարձակողականության արդյունքներն ամրապնդելու ճանապարհով: Միեւնույն ժամանակ, Ադրբեջանի Հանրապետությունը կրկին հաստատում է իր ադրբեջանական սահմանագրում հարդարտ դահանջներն ու ԵԱՀԿ շրջանակներում անցկացվող բանակցությունների միջոցով հակամարտության խաղաղ կարգավորման գործում միջազգային հանրության միջնորդական ջանքերին իր ջազգային անհրաժեշտության գործոդությունները: Ակնհայտ է, որ Հայաստանի ԱԳՆ-ի մայիսի 22-ի հայտարարության նպատակը համաշխարհային հանրության ուշադրությունը հայկական զինված ուժերի կողմից Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը մինչեւ այժմ գրաված դահլեռը եւ այդ տարածքներում Հայաստանի կողմից իրագործված էթնիկական գտումների, Ադրբեջանի 1 մլն. բնակիչներին իրենց մշտական բնակության վայրերից տեղահանելու վտասերից շեղելն է: Այսդհայով, բանակցություններին իր մասնակցությունը դադարեցնելու մասին Հայաստանի կառավարության որոշումը հայ ադրբեջանական հակամարտության կարգավորման շուրջ դիվարությամբ վերակսված բանակցություններ ձախողելու նպատակ ունի ԵԱՀԿ բադադեցության գագաթաժողովի որոշումների իրականացման գործում միջազգային հանրության միջնորդական ջանքերին խոչընդոտելու:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

«Միջազգային ներում»-ը անհանգստացած է Հայաստանում կալանավորների ճակատագրով

Մայիսի 25-ին «Միջազգային ներում» (Amnesty International) կազմակերպությունը հրապարակել է մի մանր հաղորդագրություն, որտեղ Հայաստանի իշխանություններից պահանջում է բացատրել, թե ինչու են Արամայզ Մանուկյանը մնահացել կալանավայրում, մինչ արդարամ էր իր դատավարությանը: Միջազգային հեղինակավոր կազմակերպությունը, վկայակոչելով այն դեպքերը, որ Հայաստանում արիբ կալանավորների նկատմամբ էլ կատարվում են բռնության արարքներ, ներառյալ չարաշահումները, հայկական իշխանություններից պահանջում է արագ եւ անաչառ հետաքննության ենթարկացնել կալանավորների եւ նրանց պաշտպանների վատաբարքների նկատմամբ չարչարանքի եւ հարձակման արարքների մասին գոյություն ունեցող պնդումների շուրջ:

Մասնավորապես, Արամայզ Մանուկյանի պարագան նկարագրելով, մահվանից շաբաթներ առաջ նրան բժշկական համապատասխան օգնություններ մերժելու փաստի մասին խոսելուց հետո, հաղորդագրությունը հաստատում է, որ նա ձերբակալվել էր ՀՅԴ Դաշնակցության արիբ 20 անդամների հետ, 1994 թ. դեկտեմբերին տարբեր ամբաստանություններով: Նրանցից առնվազն 3-ը, բաց տեղեկություններից, կալանավայրում ծեծի են ենթարկվել, որի հետեւանքով նրանցից մեկի դատակը, իսկ մյուսի ծնոտն է ջարդվել:

Հաղորդագրությունը հիշատակում է նաեւ կալանավորների փաստաբանների նկատմամբ անհայտ անձանց կողմից կատարված հարձակումը եւ մատնանշում, որ փաստաբաններին հաճախ ուղեկցվել է իրենց պաշտպանյալների հետ տանկցել: Մինչդեռ «Միջազգային ներում»-ը իշխանություններին հիշեցնում է, որ օրենսդրական մարմինների կալանավորների մոտ պաշտպանի ներկայության պահանջը խախտում է արդար դատավարության մասին միջազգային նորմերը:

ՄՈՍԿՎԱ

Մահացավ Հարոլդ Վիլսոնը

ԼՈՆԴՈՆ, 25 ՄԱՅԻՍ, WSJ: Այսօր այստեղ մահացավ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ, Աշխատավորական կուսակցության ղեկավար Հարոլդ Վիլսոնը 74 տարեկան հասակում: Տարիներ ի վեր նա տառապում էր քաղցկեղից:

Սիոկո Ասահարան կխոսի միայն դատարանում

Ճապոնիայի ոսիկանության կողմից ձերբակալված «Աում սինրիկիո» կրոնական աղանդի հիմիկոսների խմբի ղեկավար Մասամի Յուտիան հաստատել է, որ ինքն անձամբ արտադրել է տարբ 30 լիտր զարին: Մասամի Յուտիայի ասելով, որին ձերբակալել են մայիսի 20-ին Տոկիոյի մետրոյում մարդկանց զանգվածային թունավորման կազմակերպմանը անմիջական նորեն մասնակից լինելու կասկածանքով, իր աշխատասենյակում ինքը «ղեկավարել է բացառապես գիտական ընթերով»: Իսկ «Աում սինրիկիոյի» պատագրուխ Սիոկո Ասահարան, նախկինի պես «լռության ուխտ» է պահպանում իրեն ներկայացված մեղադրանքների առնչությամբ: Նա հայտարարում է, որ կսկսի խոսել միայն դատարանի դահլիճում:

ՄՈՍԿՎԱՅԻ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանը գազ կստանա շաբաթվա վերջում

Մառնոսի շրջանում շարունակվում են դիվերսիաները

Ընդամենը մեկ օր բաժանվանացրեց Հայաստանի գազատար վերականգնման հոդային շինարարական աշխատանքներն ավարտելու համար: «Հայգազարդ» կոնցեռնի առաջին փոխտնօրեն Լիբիր Միմոնյանն Արմենպրեսի թղթակցին ասաց, որ մայիսի 25-ի վաղ առավոտյան սկսվեցին խողովակաշարի դադրեցված հատվածների մոնտաժային աշխատանքները: Թեեւ տեղանքի հարուցած դժվարությունները մեծ են, բայց նուկցող-զոդողների բրիգադներ հայ մասնագետների մասնակցությամբ կկարողանան տեղավորվել սեղմ ժամանակացույցի մեջ, եւ Հայաստանը գազ կստանա շաբաթվա վերջում:

Միաժամանակ, հայտնի են դարձել Վրաստանի Մառնեոլի շրջանի Ղազաղան գյուղում մայիսի 24-ին տեղի ունեցած դադրեցության մասնամասներ: Այստեղ հակատանկային ականից դադրել է երկու մարդատար ավտոմեքենա: Նախնական տվյալներով, զոհվել է 6 մարդ, երկուսը ծանր վիրավոր են: Մայիսի 25-ին Թբիլիսիում այս տվյալները հայտնել է Վրաստանի պետական անվտանգության ծառայության դեկավարի տեղակալ գնդապետ Ավթանդիլ Իոսելիանին, ավելացնելով, որ մեկ օր առաջ Ղազաղան գյուղի շրջանում վնասազերծվել է նաեւ 4 հակատանկային ական: Կատարվում է հետաքննություն:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀՌԱԿ-ը վշակցում է Հրազդանի վթարի զոհերի հարազատներին

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը իր խոր վշակցությունն է հայտնում մայիսի 24-ին Հրազդանի ՊՇԷԿ-ի դժբախտ դադրատարի հետեւանքով զոհված 8 շինարարների հարազատներին ու մերձավորներին:

ՀՌԱԿ Հանրապետական վարչության

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Կարլ Դիտեր Շրոանգեր. Հայաստանն արդեն վստահություն է ներշնչում գործակիցներին

Երեկ ՀՀ կառավարության ընդունելությունների տանը Գերմանիայի Դաշնության Հանրապետության Ֆեդերալ նախարար Կարլ Դիտեր Շրոանգերը եւ ՀՀ Կոնվերսիայի նախարար Արմեն Ղոլոնյանը ստորագրեցին համագործակցության մասին: Այն ընդգրկում է «Արտակարգ ծրագիր վախճանականների համար» նախագիծը, որի շրջանակներում Գերմանիայի Դաշնությունը անհատույց (մեր նախարարը այդ մեծ բան է սիրում, կասկածը պարոն Շրոանգերը) Հայաստանին է տրամադրում 5 մլն գերմանական մարկ եւ ևս 1,8 մլն գումար գիտական ուսումնասիրությունների եւ մասնագետների պատրաստման հիմնադրամ ստեղծելու համար: Ֆեդերալ նախարարը հայտնեց, թե որոշում կա նաեւ, որը հավանաբար կհաստատվի Բոնդեսագի հունիսի 2-ի ննջարկումներում, Հայաստանին տրամադրել վարկ (13 մլն գերմանական մարկ) մասնավոր ձեռնարկության զարգացման համար: Վարկը կմարվի տրամադրվելուց 12 տարի հետո, 40 տարվա ընթացքում, 0,75 տոկոսով: Նախարարի կարծիքով, Հայաստանն արդեն հաղթահարել է իր զարգացման ճանապարհին ամենացածր կետը, որը վստահության է ներշնչում գործակիցներին: Նա իր հիացմունքը հայտնեց հայ եկեղեցու հայրապահության առաքելության կապամամբ, իսկ ԵՊՀ-ում եւ Բյուրականի անվան օդաչուների անվան հիմնադրամում կայացած հանդիպումներից պարոն Շրոանգերին համոզեցին, որ Հայաստանի առաջացի համար վախենալու կարիք չկա:

ՀՀ Կոնվերսիայի նախարար Արմեն Ղոլոնյանն ընդգծեց, որ 88-ի երկրաշարժից մինչեւ օրս Գերմանիան օժանդակել է Հայաստանին եւ օգնության ծավալների չափով Հայաստանի երկրորդ դոնորն է: Ոչ առանց Գերմանիայի հանրապետության ջանքերի կասեցվել է հանրապետության տնտեսական ճգնաժամը, սկսվել է տնտեսական աճ եւ լայնածավալ սեփականաշնորհում: «Հանրապետության մեզ, գերմանական կողմի մոտեցումները Հայաստանի նկատմամբ էականորեն փոխվել են, ասաց նախարարը: Համագործակցությունն աղագայում ես կշարունակվի»:

Մեկ ամիս հետո Հայաստան կժամանեն ԳԴՀ տնտեսության Ֆեդերալ նախարարության ներկայացուցիչները, բիզնեսմենների մի սվար խումբ Արեւելյան Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների վարչության պետ պարոն Լոդեսի գլխավորությամբ: Իր հերթին որը, Շրոանգերը ներեց, որ Գերմանիան շարունակելով օժանդակել Հայաստանին այս ծրագրի շրջանակներում, նախատեսում է տնտեսական բանակցություններ վարել շուրջ գերմանական կառավարության այցը Հայաստան կամ հակառակը:

Ֆեդերալ նախարար Կարլ Դիտեր Շրոանգերը եւ Գերմանիայի տնտեսական համագործակցության ու զարգացման նախարարության պատվիրակությունը հանդիպումներ ունեցան Վեհափառ հայրապետ Գարեգին Ա կաթողիկոսի հետ, հանրապետության վոխնախագահ Գագիկ Հարությունյանի, ԳԽ վոխնախագահ Արատես Թումանյանի, վարչապետ Հրանտ Բագրատյանի, Ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանի եւ այլոց հետ: Այսօր նրանք կմեկնեն Ադրբեջան: Մեկնումից առաջ, երեկոյան «Արմենիա» հյուրանոցի առանձներից մեկում տեղի ունեցավ հայ եւ գերմանացի լրագրողների հանդիպում, որին ներկա էին նաեւ որը. Շրոանգերը, որը. Հայեցեն, դիվանագետներ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԼՈՍՅԱՆ

ԱՆՑՈՒՂԱՐՁ

Հրանտ Բագրատյան. Հայաստանը միասնացման ուղղակի հայկեր է անում

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՅԻՍ, ՄՆՍՐՔ: Մեծենաշի նության բնագավառում ԱՊՀ նախարարությունների ու գերատեսչությունների ղեկավարների խորհրդի երեւանում այսօր բացված 8-րդ նիստի գլխավոր խնդիրը միասնական հետխորհրդային տարածում միասնացման գործընթացների զարգացման նպատակահարմար սահմաններ գտնելն է:

Նիստի բացմանը ելույթ ունեցած Հայաստանի վարչապետ Հրանտ Բագրատյանը նշեց տնտեսական նոր փոխհարաբերությունների շրջանակներում խզված արդյունավետ կապերի վերականգնման անհրաժեշտությունը: Վարչապետի խոսքերով, Հայաստանը միասնացմանն ուղղված կոնկրետ քայլեր է անում, մասնավորապես առաջարկում է ԱՊՀ շրջանակներում շրջանառության մեջ դնել ընդհանուր հաշվարկային միջոց, որի հարցը կքննարկվի Մինսկում կայանալիք ԱՊՀ ղեկավարների հանդիպման ժամանակ:

Բագրատյանի խոսքերով, ԱՊՀ տնտեսությունները տարբեր ձեւերով են մոտենում նոր տնտեսական համակարգին: Այս առումով Հայաստանը ընտրել է շուկայացման ծանապարհը, եւ այդ ընտրության արդյունքները, վարչապետի կարծիքով, արդեն շոշափելի են: Անցյալ տարի Հայաստանում ներքին համախառն արտադրանքի աճը կազմել 5 տոկոս, իսկ այս տարվա առաջին կիսամյակում 1994 թ. համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ աճել 17 տոկոսով: Ավելին, ինչպես նշեց Բագրատյանը, այս տարի ներքին համախառն արտադրանքի մոտ 70 տոկոսը կրնկնի տնտեսության ոչ պետական հատվածին:

«Մենք խուսափում ենք հովանավորչությունից, եւ մեր պետությունը բաց է առեւտրի համար: Դրա նպատակն է երկիրը սերտորեն միասնացնել ավանդական գործընկերների հետ», հայտարարեց Հայաստանի վարչապետը:

Ամերիկյան դեսպանատան նոր գրասենյակների բացում

«Մեզ համար էլ երկար տեւած շիճարարական ոդիսականից հետո վերջապես ձեր ներկայությամբ պատիվ ունենք բացելու մեր դեսպանատան վերանորոգված բաժինը, որտեղ կտեղավորվեն մեր տնտեսական հաղաքական գրասենյակները», ասաց Հայաստանում Ա. Նահանգների դեսպան Հերդի Գիլմորը երեկ հետմիջօրեին կայացած բացման ընդունելության ժամանակ: Ու թեեւ ներկաների համար ոչիք չստեղծվեց տեսնելու գրասենյակները, սակայն դեսպանի ջերմ խոսքը, «Ա. Խաչատրյան» հաղկի գեղեցիկ նվագն ու հյուրընկալների Բոբ Պաստրոնի, Սյուզան Թորնտոնի, Ջոն Քվինտուսի եւ էդ Կուլակովսկու դեսպանատան մյուս աշխատակիցների անմիջականությունը նկատել չտվեց այդ բանը: Մանավանդ որ հյուրասիրությունը կատարյալ էր, եւ ներկաների համար, գերազանցապես ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ եւ ոչ կառավարական մամուլի ու գործակալությունների լրագրողներ, խոսելու, զրուցելու, վիճելու շատ բան կար: Ընտրությունները մոտ են եւ նույնիսկ դեսպանատան նոր բաժինների բացումը անցնում է նախընտրական տենդի միջով:

ԱՄՆ. Ջոն Նաջարյանի հաղթարշավը կասեցնելու փորձեր

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 25 ՄԱՅԻՍ, ՄՆՍՐՔ: Ամերիկյան «Թայմ» առաջատար ամսագրի մայիսյան համարը մեծ հոդված էր նվիրել օրգանների փոխպատվաստման բնագավառի ԱՄՆ առաջատար վիրաբույժ դոկտոր Ջոն Նաջարյանին: Մեջբերելով իր հազարավոր փրկված հիվանդներին, որոնք նրան փրկիչ հրեշտակ են համարում, եւ նրա բազում գործընկերների խոսքերը, որոնք նրան կոչում են «20-րդ դարի բժշկության հսկա», «Թայմը» նկարագրում է վիրաբույժ Նաջարյանի հեղափոխական մեթոդը: 70 ական թվականների սկզբում ստացել է անհիլիմֆոցիտ գլոբուլին (ԱԼԳ) նյութը, որը թուլացրել է փոխպատվաստված օրգանների մերժումը օրգանիզմի կողմից: Եւ առաջին անգամ թույլ է տվել հաջողությամբ իրականացնել լյարդի փոխպատվաստումը: Նաջարյանը փրկել է 50 հազարից ավելի մարդու: Նրա մեթոդն օգտագործվում է 175 կլինիկաներում: Այդ մեթոդի կիրառումից ստացված եկամուտը կազմում է 80 մլն. դոլար: Իսկ Նաջարյանի անձնական տարեկան եկամուտը՝ 600 հազար դոլար: «Թայմի» կարծիքով, Ադրբեջանի հայ փախստականների ընտանիքի անդամ, 67 ամյա Նաջարյանի հաջողությունը «ամերիկյան երազի» իդեալական մոդել է: Սակայն այժմ Նաջարյանի հաղթարշավը դառնում է ողբերգություն, քանի որ դեղորայքային նյութերի ԱՄՆ Դաշնակցային վարչությունը անպատեհորեն մեղադրեց նրան պատշաճ կերպով չհաստատված դեղամիջոցի օգտագործման եւ օրենքի այլ խախտումների մեջ: Շատերի կարծիքով, այս մեղադրանքի հետեւում կանգնած են ԱՄՆ դեղագործական հզոր լոբբիի խարդավանքները, որը դժգոհ է այն բանից, որ անհաս բժիշկը ձեռնոց է նետել դեղորայքեր արտադրող խոշոր ընկերություններին:

ԱՍՊԱՐԻՍ

Ընտրությունների ընթացքում դրամի կայունությունը կպահպանվի՞

Առաջիկա խորհրդարանական ընտրությունների ընթացքը տնտեսության վրա իրական ազդեցություն չի կարող թողնել: Համոզված են ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանը. երեկ կայացած մամուլի ասուլիսում այն հավոզմունքը հայտնեց, թե մայիսի 25-ի դրությամբ ԿԲ-ի հաշվեկշռում արտաքին պահուստներ կազմում են 70 մլն դոլար, ինչը հնարավորություն կտա դրամի ներկա կայունությունը շնչին փոփոխությամբ պահպանել: Տատանումների ծավալները չեն գերազանցում 5-7 տոկոսը: Ընդ որում, ներված 70 մլն դոլարից 17,1 մլն-ը կազմում է վերակազմողական վարկը, որն ստացվել է մայիսի 23-ին: Նրա ասելով, ԿԲ-ն բոլոր հնարավորություններն ունի, որպեսզի ի հակակշռի արյան իսկ ծագրված հաղթակարգությունը: Անդրադառնալով շահ բանկիրների խորհրդարանական ընտրություններին մասնակցելու հարցին, որը Ասատրյանը նշեց, թե դա դրական երեւույթ է, քանի որ բանկիրները կարող են իրենց լայն մասնակցությունը բերել օրենսդրական աշխատանքին: Ինչ վերաբերում է նրան, արդյոք նա բացի համամասնականից, մասնակցում է նաեւ մեծամասնականի ընտրություններին՝ ասելով, որ ընտրողը [illegible] սահմանում է, որ մեր ընտրական համակարգում չի վերցրել:

Բագրատ Ասատրյանը խոսեց նաեւ այս տարվա առաջին եռամսյակի արդյունքների մասին: Նրա գնահատմամբ, առաջին եռամսյակի գոնացիները գոհացուցիչ էին: Սղաճը կազմել է 6 տոկոս, իսկ արդյունաբերական արտադրանքի աճը գնահատվել է 15 տոկոս: Մայիս ամսվա սղաճը դեռեւս ամփոփված չէ:

Այնուհետեւ, ԿԲ-ի նախագահը ներեց, թե Հայաստանը ձեռնպահ չի մնա որեւէ երկրների տեխնիկական օգնություն ցույց տալուց: Նրա ասելով, այդ օգնությունը հիմնականում նախատեսված է նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների համար, եւ հիմնականում այն պետք է լինի մասնագիտական: ԿԲ նախագահը խոսեց նաեւ չվճարումների մասին, նշելով, թե առ 1 հունվարի 1995 թ. դրամի հասել են 47,8 մլրդ դրամ եւ միայն 1,5 տոկոսն է, որ կազմում են աշխատավարձի չվճարումները: Բ. Ասատրյանը անդրադարձավ նաեւ ԼՂՀ կատարած այցին, նշելով, որ Հայաստանի առեւտրական բանկերը այնտեղ բացում են մասնաճյուղեր: Նա հայտնեց նաեւ, թե Հայաստանի ԿԲ-ի եւ ԼՂՀ ԿԲ-ի հարաբերությունները կարգավորվում են, եւ այժմ սկսվել է սերտ համագործակցության շրջանը:

Ա.Հ.

Դիլիջան. Սողանքի հետեւանքները վերացվում են

Դիլիջանի Գոշ գյուղի սողանքի պատճառով առաջացած վթարի հետեւանքները վերացնելու եւ վթարված տարածից բնակչությանը նոր բնակավայր տեղափոխելու նպատակով ընթանում են նախագծահետազոտական եւ շինարարական աշխատանքներ: Պատրաստ է 4,4 հազ. մ² ընդհանուր մակերեսով նոր բնակելի թաղամասի նախագիծը: 1991 թ. սկսվել է 8 բնակելի տների շինարարությունը: Շինարարության նոր մալ ընթացին խոչընդոտում է ֆինանսական միջոցների բացակայությունը: ՀՀ կառավարության մայիսի 7-ի թիվ 250 որոշմամբ Ռուսաստանի Դաշնության կողմից տրված վարկի հաշվին իրականացվող կառիտալ շինարարության ծրագրում նախատեսված է շահագործման հանձնել 380 մ² բնակելի մակերես՝ այդ նպատակի համար ներդնելով 20 մլն դրամ: Միայն Գոշ գյուղի ինժեներա երկրաֆիզիկական հետազոտությունների շարունակման, արդյունավետ հակասողանքային միջոցառումների մշակման, ինչպես նաեւ ընթացիկ տարում նախագծային աշխատանքների ավարտման համար անհրաժեշտ է 7,33 մլն դրամ:

ԱՐԳՈՒՏՅԱՆ

Հիդրոմեհ կայանը լռում է

ՀՀ կառավարությանն առընթեր «Հայհիդրոմեհ» հիդրոօդերեւութաբանության վարչությունից «Նոյյան տապան» գործակալությանը հայտնեցին, որ մայիսի լույս 26-ի եղանակի տեսությունը չի լինելու՝ հիդրոմեհ կայանի տեխնիկական անսարքության պատճառով:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ԱՇՏԱՐԱԿ

Թուրքիան վարկեր կտրամադրի զույգ երկրներին...»:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

Անկարա-Երեւան հարաբերությունների նոր շրջան

Թուրքական «Սաբահ» թերթը հրապարակել է իր թղթակցի խնամքով վավերագրական հոդվածը, որում հեղինակագիրը շարադրում է հայ-թուրքական բարեկամության կայացման բոլոր հնարավոր նախադրյալները: Թերթը գրում է, որ Թուրքիայի եւ ԱՄՆ-ի համաձայն նախաձեռնության շնորհիվ իր ավարտին է մոտենում հայ-ադրբեջանական պատերազմը, որ շարունակվում էր տարիներ ի վեր: «Այս երկու երկրների, ինչպես եւ Անկարայի եւ Երեւանի միջեւ նոր շրջան է սկսվում»: Թուրքիան բացում է Հայաստանի հետ օդային միջանցքը, ԱՄՆ-ն ճնշում է գործադրում ՀՀ եւ ԼՂՀ կառավարությունների վրա, ԱՄՆ նախագահի ու ՀՀ նախագահի կարեւորում են Բաքու-Երեւան-Անկարա եռանկյունու դրացիական հարաբերությունների առյագան, «այնուհետեւ Հայաստանը կհնարավոր գոլյալ տարածքներից, ԱՄՆ-ն կվերացնի Ադրբեջանի շրջափակումը, Թուրքիան Հայաստանի շրջափակումը, դիվանագիտական հարաբերություններ կհաստատվեն Բաքվի եւ Երեւանի միջեւ, բացակցություններում ԼՂՀ ինքնավարությունը կընդգրկվի, ԱՄՆ-ն եւ Թուրքիան վարկեր կտրամադրեն զույգ երկրներին...»:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ՌԱՍԿՈՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԳԵՐԹ
Հրատարակության ե տարի
Ինքնագիր եւ հրատարակչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / Ինս. 521635
Խմբագիր
ՍԱՄՎԵԼ ԴԱՎԱՆԵԱՆ / Ինս. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տառաձեւերը ՊԱՅԵԼ ՊԱԼԱՍԵԱՆԻ
Apple Macintosh համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutiun st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

«Քրիստոնյաները օգնում են քրիստոնյաներին» ծրագիրը Հայաստանում

Անցել է տարբ հարյուր տարի, եւ մինչեւ այժմ էլ հայ ժողովուրդը մեծ երախտագիտությամբ է հիշում գերմանացի հոգեւորական, արեւելագետ, հասարակական գործիչ Հովհաննես Լեփսիուսին: Հովհաննես Լեփսիուսը իր գործունեության առանցքը դարձնելով մարդասիրությունը, երկար տարիներ փաստեր է հավաքել Օսմանյան կայսրության մեջ հայերի ծանր դրության վերաբերյալ, որոնք հրատարակել է «Հայաստանը եւ Եվրոպան» աշխատության մեջ 1896 թ: Համիդյան կոտորածներից անմիջապես հետո, մեծ մարդասերի ջանքերով ստեղծվում է գերմանական քրիստոնեական գթասրտության միությունը Արեւելքում, որը գործնական մեծ աջբժշկական օգնություն: Նոյաստել են նաեւ կրթական, գյուղատնտեսական, ջրամատակարարման եւ զանազան հարցերի լուծմանը: Այժմ այնտեղ նրանք դահում են Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով հոգեկան խանգարումներ ստացած երեխաների մի գիշերօթիկ: Նաեւ օժանդակում են 350 աշակերտ ունեցող մի դպրոցի եւ ղեկավարում են տեղի դիակոնիկ կենտրոնը, որտեղ աշխատում են կարմիր խաչի, հայկական ավետարանական, հռոմեական կաթոլիկ եւ հայ ուղղափառ եկեղեցիների հետ: 1994 թ. սեպտեմբերից սկսած AEM-ը Հայաստանին բժշկական օգնություն է ցույց տալիս. «Մեր նոպատակն է հայերի հայրենիքում առաջադ առաջնահերթ զարգացնել գործնական քրիստոնեական գթասրտության միության»՝ AEM-ի տնօրեն Հորսթ-Դիթեր Շուլցեն: Ահա թե ինչ ասաց Հայաստանից ստացած իր տպավորությունների մասին:

– Երբ ես առաջին անգամ եկա Հայաստան, դա 1994 թն էր, հարցրի մի քանի մարդկանց, թե ինչպես են առորում: Նրանցից շատերի դպատասխանը նույնն էր. «Խորհրդային իշխանության ժամանակ մենք լավ էինք առորում, այսօր գտնվում ենք շատ ծանր տնտեսական վիճակում, եւ չնայած դրան, հիմա ունենք հավատ եւ հավատում ենք առաջային»: Այն, ինչ լսեցի, ինձ առքեցրեց, եւ իմ մեջ առաջացավ մի կարծիք, որ երբ այս վիճակում մարդիկ կարող են հուսալ եւ հավատալ, ուրեմն այս ժողովուրդը առաջա ունի: Նրանց այս գաղափարը օգնեց իմ կազմակերպությանը ամեն ինչ անել Հայաստանին օգնելու համար: Իմ վրա մեծ տպավորություն թողեց, երբ տեսնում էի մարդկանց, որոնք չնայած իրենց կարիքին, օգնում էին ուրիշ մարդկանց: Այս անգամ ինձ մի մարդ ասաց, որ ինձ շատ շնորհակալ է մեզանից, իսկ ես ասացի, որ մեզ համար դժվար չէ, քանի որ մենք տալիս ենք այն, ինչ ունենք, իսկ հայերը տալիս են այն, ինչ իրենց է պետք: Ես կցանկանայի, որ Հայաստանում մարդիկ իրար օգնեին, քանի որ այդ ամենը շատ ավելի բանկ է, քան այն, ինչ որ մենք տալիս ենք:

Հիմա գիտակցելով մեր պատասխանատվությունը Հայաստանի համար, հնարավորությունների սահմաններում տարբեր կազմակերպությունների միջոցով մեր վորը օգնությունն ենք ուղարկել: Մեր ծրագրի մեջ է մտնում նաեւ սոցիալական օգնության հետ մեկտեղ սովորեցնել մարդկանց ձանձրել Աստվածաշունչը: Ես գիտեմ, որ Հայաստանում շատ ազանդավորներ կան, եւ որոնցի մարդիկ ճանաչեն ճշմարիտ Աստծուն, նրանք պետք է լավ իմանան Աստվածաշունչը: Հայաստանի պատմությունը ծանոթ լինելով, ես այն կարծիքին եմ, որ այս ժողովուրդը Հիսուսից ուժ է ստացել եւ կատանա՝ կերտելու համար իր լուսավոր ապագան:

ՏԵՐԻԳԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տեղեկագրի հաջորդ հարցն է, թե ինչ միջոցներով են օգնում: «Մեր միջոցների 90 տոկոսից ավելին գոյանում են հանգանակություններից: Մնացած մասը ստանում ենք մեր եկեղեցուց՝ Համբուրգի ավետարանական միսիոներական ծառայությունից, ինչպես նաեւ Հարավ արեւմտյան գերմանական միսիոներական եւ այլ կազմակերպություններից: Այդ միջոցներով մենք ֆինանսավորում ենք Անգարի եւ Երեւանի մեր աշխատանքը»:

Վերջին՝ ինչպես դուք կարող եք օգնել հարցին, այս կազմակերպությունը դասախոսում է. «Usեք մեր կազմակերպության հանգանակողների շարքը: Որոնցի ֆինանսապես օգնել կազմակերպությանը, դուք կարող եք. 1. Խնամակալություն անել: Մեկ երեխայի համար երեւանում կամ Անգարում մեզ հարկավոր է 60 DM, իսկ դպրոցի համար 15 մարկ: Հնարավոր է նաեւ երեխայի խնամակալությունը, երեխան դառնում է ձեր սանիկը: Դուք կստանաք ձեր սանիկի անունը եւ տեղեկություններ նրա մասին: 2. Դառնալ «1000 մարդ» ձեռնարկի անդամ: Մենք փնտրում ենք 1000 մարդ, որոնք ամսական 10 մարկ են հանգանակում միսիայի այն կարիքների համար, որոնցով հնարավոր է ծածկել միայն այդ երեխաների ծախսերը»: Տեղեկագիրը գրված է գերմաներեն՝ եւ ուղղված է գերմանացիներին, բայց ցանկալի կլինի, որ այս մարդասիրական գործին իրենց աջակցությունը բերեին նաեւ տվյալ երկրի մեր հայրենակիցները:

Վերջերս, մայիսի սկզբին Հայաստան էր այցելել «Արեւելքում Գերմանական քրիստոնեական գթասրտություն միության» նախագահ Հորսթ-Դիթեր Շուլցեն: Ահա թե ինչ ասաց Հայաստանից ստացած իր տպավորությունների մասին:

– Երբ ես առաջին անգամ եկա Հայաստան, դա 1994 թն էր, հարցրի մի քանի մարդկանց, թե ինչպես են առորում: Նրանցից շատերի դպատասխանը նույնն էր. «Խորհրդային իշխանության ժամանակ մենք լավ էինք առորում, այսօր գտնվում ենք շատ ծանր տնտեսական վիճակում, եւ չնայած դրան, հիմա ունենք հավատ եւ հավատում ենք առաջային»: Այն, ինչ լսեցի, ինձ առքեցրեց, եւ իմ մեջ առաջացավ մի կարծիք, որ երբ այս վիճակում մարդիկ կարող են հուսալ եւ հավատալ, ուրեմն այս ժողովուրդը առաջա ունի: Նրանց այս գաղափարը օգնեց իմ կազմակերպությանը ամեն ինչ անել Հայաստանին օգնելու համար: Իմ վրա մեծ տպավորություն թողեց, երբ տեսնում էի մարդկանց, որոնք չնայած իրենց կարիքին, օգնում էին ուրիշ մարդկանց: Այս անգամ ինձ մի մարդ ասաց, որ ինձը շատ շնորհակալ է մեզանից, իսկ ես ասացի, որ մեզ համար դժվար չէ, քանի որ մենք տալիս ենք այն, ինչ ունենք, իսկ հայերը տալիս են այն, ինչ իրենց է պետք: Ես կցանկանայի, որ Հայաստանում մարդիկ իրար օգնեին, քանի որ այդ ամենը շատ ավելի բանկ է, քան այն, ինչ

ԱԶԳ

ազգային

Կոռակցիաներու վերադարձ դարձեր գոյութիւն ունի իրենց ծագման առաջին օրէն: Ըստ ժամանակի եւ դարձաններու փոխուած է դարձային տասկութիւնը: Վաճառի օրերուն տեսնուած է նոյնիսկ գործակցութիւնը անոնց միջեւ: Ինչպէս Վանի, Ուրֆայի, Այնթափի, Սուէտիայ ինքնաբաշխութեան կոխներու ընթացքին: Այս բացառիկ դէպքերէն զատ, երբ ժողովուրդն զոյութեան անհրաժեշտ վտանգ չկայ, հայ կեանքի ոեւէ խնդիր տարիներ շեն յաջողած համաձայնութեան գայացնել իրարու միջեւ, չեն յաջողած ազգային հարցական ոեւէ նոյնական ճշդել եւ անոր հետագնդումին համար վոխադարձ գործակցութեան ստեղծել:

Շատ դաշնակցականներու եւ հիչակեալներու դարձային կը դժուարանան հարցական մեկնութեան մը ներու չորս տասնեակ տարիներէ ի վեր հետաքրքրած հայրենասիրական հարցական վարքագիծը կոռակցական առանցքին մը ստեղծած է, որկէ դժուար է, եթէ ոչ անկարելի, շեղում ներ կատարել: Համկավարներն չեն ժխտեր առձեռնական կարգերու տեսնական, բնկերային սկզբունքներու հանդէպ իրենց անհաշտութիւնը: Բայց զոռ տեսական եւ գաղափարական գետնի վրայ դարձելով իրենց բնդդիմութիւնը առձեռնական թերնումներու հանդէպ, ազգային շահերու առջեւ ժամանակաւոր տեսակէտէն կ'բնդունին, որ անխուսափելի անհրաժեշտութիւն է Հայաստանի դարձաններու եւ զարգացումին համար Առձեռնական Միութեան անդամակցութիւնը: Կ'բնդունին որ ներկայ դարուն եւ Հայաստանի աշխարհագրական դիրքին, հարցական եւ տնտեսական բնդհանուր դարձաններ ներու չորս տասնեակ տարիներէ ի վեր հետաքրքած հայրենասիրական հարցական վարքագիծը կոռակցական առանցքին մը ստեղծած է, որկէ դժուար է, եթէ ոչ անկարելի, շեղում ներ կատարել: Համկավարներն չեն ժխտեր առձեռնական կարգերու տեսնական, բնկերային սկզբունքներու հանդէպ իրենց անհաշտութիւնը: Բայց զոռ տեսական եւ գաղափարական գետնի վրայ դարձելով իրենց բնդդիմութիւնը առձեռնական թերնումներու հանդէպ, ազգային հարցական ոեւէ նոյնական ճշդել եւ անոր հետագնդումին համար Առձեռնական Միութեան անդամակցութիւնը: Կ'բնդունին որ ներկայ դարուն եւ Հայաստանի աշխարհագրական դիրքին, հարցական եւ տնտեսական բնդհանուր դարձաններ

ՎԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈԱԿ-ը Լեւոն Տէր-Պետրոսեանի գնահատմամբ

**Վերջերս «Նաիրի» հրատարակչութեան ՀՀ նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջարկով («Արարիչ» կոչնակը») վերահրատարակել է 1965 թ. Բեյրութում «Մշակ» տպարանի հրատարակած Լեւոն Տէր-Պետրոսեանի «Առաքելութիւններ» վերնագրով գիրքը, որը նախաձեռնութեան

ԱԶԳ

Միջազգային

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-Ճապոնիա. Ավտոմոբիլային պատերազմի ուրվականը

Ավտոմոբիլների առեւտրի կարգավորման նվիրված ամերիկա-ճապոնական բանակցությունների ձախողումը կարող է հանգեցնել Ճապոնիայի նկատմամբ ԱՄՆ-ի պատժամիջոցների ձեռնարկման: Մոտ օրերս նախագահ Քլինթոնը պետք է այդ առնչությամբ հայտարարություն անի հնարավոր պատժամիջոցների մասին:

Ավտոմոբիլների առեւտրի հարցում Ճապոնիայի եւ ԱՄՆ-ի հարաբերությունները միշտ չէ, որ լարված են եղել: 1923 թ. Տոկիոն ավերած երկրաշարժից հետո Ճապոնիայի կառավարությունը ներմուծեց մեծ ճանապարհով օտարերկրյա ավտոմոբիլներ եւ արտասահմանյան ընկերություններին խրախուսում էր մեքենաներ արտադրել Ճապոնիայում: «Ջեներալ մոթորզը», «Ֆորդը» եւ «Քրայսլերը» Ճապոնիայում բաժանմունքներ էին ստեղծել դեռ այն բանից առաջ, երբ սկսեցին գործել «Նիսսանի» եւ «Տոյոտայի» գործառնությունները, քանի որում «Ֆորդը» ընկերությունն արագորեն առաջատար ավտոմոբիլաշինարար դարձավ Ճապոնիայում:

Դժվարություններ ծագեցին 1935 թ., երբ Ճապոնիայի կառավարությունը սահմանափակումներ եւ երկիր ներմուծվող արտարժույթի խիստ սահմանափակումներ եւ երկիր ներմուծվող արտադրանքի մասնագներ:



Այդ ռազմավարությունն արդյունավետ եղավ: 50-ական թթ. «Տոյոտա» եւ «Նիսան» ընկերությունները թույլ տվեցին ուղեւորափոխադրումների համար նախատեսված ավտոմոբիլների առաջին նմուշները. «Բլուբերդ»: ԱՄՆ-ի տվյալների համաձայն, դրա հետեւանքով Ճապոնիայի շուկայում ներմուծվող մեքենաների բաժինը 1953 թ. 60 տոկոսից 1960 թ. իջավ 1 տոկոսի:

ԱՄՆ-ի եւ Ճապոնիայի հարաբերություններում լարվածությունն աճում էր Ճապոնիայի ավտոարդյունաբերության զարգացման եւ արտասահմանյան շուկաներում դրա ներկայության ուժեղացման համեմատ: 1967 թ. ԱՄՆ-ը անհրաժեշտ համարեց Ճապոնիայի հետ բանակցություններ վարել ավտոմոբիլների ներմուծումն ազատականացնելու եւ Ճապոնիայի արդյունաբերության մեջ ներդրումներ կատարելու շուրջը:

Այդ առաջին բանակցությունները շարունակվեցին ընդհատ մինչեւ 1969 թ.: Հաջորդ տարիներ աշխ ընկան Ճապոնիայի կողմից ներմուծման եւ ներդրումների սահմանափակումների աստիճանական թուլացմամբ: Մասնավորապես կառավարությունը համաձայնեց վերացնել շարժիչների ներմուծման մի շարք սահմանափակումներ եւ ճապոնական ձեռնարկություններում օտարերկրյա ներդրումների թույլատրելի բաժինը բարձրացնել 50 տոկոսի:

Սակայն վախենալով Ճապոնիայի ավտոարդյունաբերության հարաճուն ուժից, ԱՄՆ-ը պահանջում էր Ճապոնիայի ներքին ավտոմոբիլային շուկայի բացման նորանոր քայլեր:

1974թ. Ճապոնիան դարձավ աշխարհում ավտոմեքենաների խոշորագույն արտահանողը: Ճապոնական ավտոարդյունաբերության հարաճուն զորությունը մեծացնում էր Ճապոնիայի եւ ԱՄՆ-ի հարաբերություններում տիրող լարվածությունը, որը գագաթնակետին հասավ 70-ական թթ. վերջերին եւ 80-ականների սկզբներին: Ստեղծված իրավիճակը Ճապոնիային ստիպեց 80-ական թթ. կամովին կրճատել դեպի ԱՄՆ կատարվող արտահանումները:

Ներկայումս գոյություն ունեցող ամերիկա-ճապոնական առեւտրական տարածայնությունների պատճառն այն է, որ ԱՄՆ-ը համառորեն երաշխիքներ է պահանջում, որ Ճապոնիայի շուկան առավել բաց կլինի ներմուծման համար, մինչդեռ Ճապոնիան չի ցանկանում որեւէ պարտավորություն ստանձնել:

«ԻՆԴԵՊԵՆԴԵՆՏ ԻՆՎԵՍՏԻՍ»
16 մայիս, 1995 թ.

ՏԱՐԱՌՈՒՏ

Առաջնայինը պայքարն է գործազրկության դեմ

Գործազրկության դեմ պայքարը պետք է դառնա Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության անդամ երկրների գործունեության առաջնային ուղղությունը: Այս մասին, ինչպես Փարիզից հաղորդում է ԻՏԱՏՍՍՈՒ-ը, ասվում է այս կազմակերպության 25 անդամ երկրների նախարարների այստեղ ավարտված ամենամյա երկօրյա հանդիպման արդյունքներին նվիրված չորեքշաբթի օրն ընդունված ամփոփիչ կոմյունիկեում: Միաժամանակ նախարարները հանդես են եկել միջազգային շուկաների ազատականացման համար խոչընդոտների վերացման օգտին եւ վճռականորեն դատապարտել են տարատեսակ հովանավորության ամեն մի ձեւ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԿԺԴՀ-ԱՄՆ. Դարձյալ փակուղի

ԿԺԴՀ-ի եւ ԱՄՆ-ի միջեւ անցած շաբաթ օրվանից Քուալա Լումպուրում շարունակվող բանակցությունները Կորեական թերակղզու միջուկային հիմնախնդրի շուրջը փակուղի են մտել: Ամերիկայի պատվիրակության ղեկավար Թոմաս Հաբարդը, ինչպես մայիսի 25-ին հայտնի է դարձել ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին, հարավկորեացի եւ ճապոնացի դիվանագետների հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարել է. «Կողմերի տարածայնությունների առումով ոչ մի առաջխաղացում չկա»: Փորձարար է մնացել երկու թեթեւ ջրային միջուկային ռեակտորների աղբյուրի հարցը: Վաշինգտոնը պնդում է, որ ռեակտորներ պատրաստվեն Հարավային Կորեայից, պատճառաբանելով, որ միայն նա է պատրաստ դա անել անվճար: Ռեակտորներն արժեն շուրջ 2 միլիարդ դոլար, իսկ Փհենյանը հրաժարվում է ընդունել Հարավային Կորեայի ռեակտորները, պնդելով, որ դրանք չեն համապատասխանում երկրում գործող անվտանգության նորմաներին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ռուսական 15-րդ արբանյակը ուղեծիրում

Մայիսի 25-ին Մոսկվայի ժամանակով 0 ժամ 10 րոպեին Պլեսեցկի տիեզերադաշտից հաջող մեկնարկ է կատարել «Մոլնիա-Մ» մղիչ հրթիռը, որը ուղեծիր է դուրս բերել «Կոսմոս» շարի հերթական ռազմական արբանյակը: Արձակումն իրականացրել են Ռուսաստանի ռազմաուժերական ուժերը: Այն դարձել է այս տարի Ռուսաստանի արձակած 15-րդ արբանյակը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱԳՐԲԵՋԱՆ

Շեեւլինգը շեշտում է փախստականների ծանր վիճակը

Բախվում կայացավ Ադրբեջանում Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության պատվիրակության կազմում գտնվող, այդ կուսակցության կողմից Բունդեսթագի պատգամավոր Դիտրիխ Շեեւլինգի մասին ասուլիսը, որը նվիրված էր Իրիէլիի շրջանի փախստականների վրանային ավանների այցելությանը: Պրն. Շեեւլինգը նշեց, որ փախստականներից շատերը մարդասիրական օգնության անարդար եւ անկանոն բաշխման զոհ են դառնում: «Փախստականների մեջ կան չարաճճագործածներ, որոնք այդ պատճառով չեն ստանում մարդասիրական օգնությունը», հայտարարեց նա: «Դեռ ավելին, ես համոզված եմ, որ ոչ ոք չգիտի, թե քանի մարդ է առկա այդ տեղ: Նման իրավիճակում խոսք անգամ չի կարող լինել այնտեղ բնակվող մարդկանց հոգու անդորրի մասին: Նրանք բոլորը մտածելու են պատրաստի արդյունաբերությունների, գյուղատնտեսական եւ ապասնաբուծական ֆիրմաների ներկայացուցիչները: Ինչպես հայտնի է, լրատվությունն ավելացնում է, Թուրքիան 1991 թվի Պարսից ծոցի պատերազմի օրերին իր օդային բազաները բաց էր արել Ամերիկայի գլխավորությամբ դաշնակից ուժերի ռազմական ինքնաթիռներին, որոնք էլ ազատագրեցին Քուվեյթը յոթամսյա իրաքյան գավթումից:

Դեմիրելը Պեկինից մեկնեց Շանհայ

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն, պաշտոնական այցով Չինաստան եւ Ինդոնեզիա կատարած այցի շրջանակներում Պեկինում ավարտվեցին նախագահ Ս. Դեմիրելի հանդիպումները: Դեմիրելը Պեկինում հանդիպում ներ ունեցավ Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչների հետ: Այնուհետեւ նրան ընդունեց ՉԺՀ-ի վարչապետ Լիդենը: Հանդիպումների ընթացում շոշափվեցին երկկողմ հարաբերությունների զարգացման եւ փոխադարձ համագործակցության խնդիրները: Դեմիրելը Պեկինից մեկնեց Շանհայ:

Թուրքիան սնունդ է ուղարկում Հյուսիսային Իրաք

TRT-ն հաղորդում է, որ Թուրքիայի արտգործնախարարությունը հրապարակել է մի հայտարարություն, ուր նշվում է, որ սկսվել են Հյուսիսային Իրաքի ժողովրդին մարդասիրական օգնության առաքման երկրորդ փուլի աշխատանքները: Նշվում է, որ ուղարկվել է 2316 տոննա սննդամթերք: Հյուսիսային Իրաքի Սուլեյմանիյեի, Էրբիլի եւ Զախոյի գավառների եւ շրջակա գյուղերի բնակչությանը անցյալ տարի տրվել է 13 միլիոն դոլլար արժողությամբ սննդամթերք եւ դեղորայք:

Գ. Ց.

Sputnik

«Սպուտնիկ»
Միջազգային տուրիզմի բյուրո

ընդլայնում է հայ զբոսաշրջիկների երթուղիները:

Առաջին անգամ
պարբերական ուղիղ չվերթ՝
ԵՐԵՎԱՆ-ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ-ԵՐԵՎԱՆ
Առաջիկա թռիչքը՝ մայիսի 30-ին

Ընդամենը 520$ եւ՝
- Վեցօրյա վայելք Միջերկրականի հարավային ամենաճանաչված ծովափին:
- Հանգստի կատարյալ պայմաններ:
- 3***հյուրանոց, տրանսֆեր, սնունդ՝ օրը 2 անգամ:
- Մինչեւ 25 կգ ուղեբեռ փոխադրվում է անվճար, յուրաքանչյուր լրացուցիչ կգ՝ 1.3 $
- Շրջագայությունների եւ սուր տպավորությունների սիրահարների համար կկազմակերպվեն լրացուցիչ էքսկուրսիաներ դեպի Եգիպտոսի տեսարժան վայրերը:

Գործարարներին ընծեռվում է նոր շուկա յուրացնելու լավ հնարավորություն:
Նուռնատիպ ապրանքներով գերհագեցած հայաստանյան շուկայում Եգիպտոսից բերվածՉեր ապրանքները մեծ պահանջարկ կունենան:
Եղեք առաջինը եւ Դուք կշահեք:

Ուղեգրի ցածր գին + նոր եւ էժան ապրանքներ + պահանջարկ նորի հանդեպ՝ ահա ձեր հաջողության գրավականը:

Կատարվում է փաստաթղթերի արագ ձեւակերպում

«Սպուտնիկ» բյուրոյի հասցեն՝
Երեւան, Մոսկովյան 31
Հեռախոսներ՝ 533092, 534940, 538419, 535012

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

մշակույթ

9 հարց արդեն մրցանակակիր Արամ Աբրահամյանին ու Հակոբ Ասատրյանին

Մեր թերթի մայիսի 24-ի համարում տեղեկագրել ենք, որ լրագրողներ Արամ Աբրահամյանին եւ Հակոբ Ասատրյանին մայիսի 21-ին շնորհվել է ՅՆԵՆյան մշակութային միության «Արդգես եւ Նիտա Բալյան» ամենամյա մամուլի մրցանակը, նաեւ հազարական ամերիկյան դոլարի գարգեր: Դռամական պարգեր մրցանակակիրների անունը կրող հուսատախտակի հեւ կիսանվի տերերին մոտ առազգայում, երեւանում, անձամբ տիկին Նիտա Բալյանի կողմից: Շնորհավորելով մեր գործընկերներին եւ ոգեւորող այս լուրը դիտելով դժվար ժամանակներ, բայց հուսալի առագա ունեցող հայ մամուլի ներկա հարթանակ, անխմաս եւ անդաստեն չենք գտնում մեր թերթում հարցազրույց տազարել նրանց հեւ: Առաջին զրուցակիցս հնռոսատլրագրող, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանն է:

– Ենթադրում էի, որ ինչ-որ մրցանակ անպայման կստանամ: Այն ժամանակ ոչ հարաբերականությամբ, ոչ լրագրությամբ չէի զբաղվում եւ կարծում էի, թե որեւէ երաժշտական կարժանանամ: Նույնիսկ երազում եմ տեսել:

– Կարելի՞ է մտածել, որ իբրեւ երաժշտական չգնահատվեցիք, դրա համար փորձեցիք լրագրության մարզը:

– Դա, իհարկե, որոշ չափով կասակ է, բայց կասակի մեջ ճշմարտություն կա: Հիմա երաժշտագիտությունը հասարակական պահանջարկ չունի, եւ հանգված եմ, որ մոտ ժամանակներս էլ չի ունենա, իսկ լրագրությունն ունի: Երբ երաժշտագիտությունը նույնպես պահանջարկ ունենա, եւ անկեղծ ասած այնքան վարձատրվի, որքան լրագրությունը, ես հավանաբար կվերադառնամ իմ հիմնական աշխատանքին:

– Որեւէի մի մրցանակ էլ այդ մարզո՞ւմ ստանալ:

– Չգիտեմ Նորվեգյան մրցանակ տալի՞ս են երաժշտագետին, բայց գոցե ես լինեմ առաջինը:

– Այս մրցանակը շահել եք ավելի շատ իբրեւ «Առավոտի» խմբագիր, թե՞ հետազոտող:

– Հույս ունեմ, որ այն տրված է նաեւ «Առավոտի» խմբագրին: Անցյալ դեկտեմբերից ճվիրված եմ այդ գործին եւ համոզված, որ լավ բերթ ստեղծելը շատ դժվար բան է: Երեք 10 տոկոսով առաջադիմել եմ ու մոտեցել «Ազգին», գոհ եմ: Բայց եթե հետազոտելու լույր չունենայի, հեռի մրցանակ ինձ չէին տա:

– Մրցանակը պարտավորեցնո՞ւմ է:

– Մրցանակը պարտավորեցնում է ինձ շարունակել այն խորհրդային գործով զբաղվելու, որ ունեմ: Ուշադրությունը հեռատեսությամբ կլ

ԱԶԳ

Մարզական

ՀԱՄԱՍՏ

Հայաստանի ախմաստիստների մեծ հաջողությունները

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Անկարա
հատուկ «Ազգի» համար

Թուրքիայի մայրաքաղաքում ավարտվեցին կանանց եւ տղամարդկանց աշխարհի առաջնությունների եվրոպական 5-րդ զոտու փնջային մրցաշարերը: Գերազանց հանդես եկան մեր հանրապետության ներկայացուցիչները: Վերջին տարում երեւացի գրոսմայստեր Ալոս Անաստասյանը, ոչ ոքի խաղալով Հունաստանի ներկայացուցիչ Նիկոպալիդիսի հետ, 9 հնարավորից վաստակեց 6 միավոր եւ Գեորգաձեի (Վրաստան) ու Կոստոպիասի (Հունաստան) հետ բաժանեց առաջին երեք տեղերը եւ միջմրցային ոսկեզօծ ձեռք բերեց: Արտաշես Միհասյանն ուժեղագույն եղավ մնալու համար վերջին տարում, ինչպես նշել ենք, սղիսակնեռով պետք է հաղթեր հենց Կոստոմիասին, սակայն մրցավեճն ավարտվեց ոչ ոքի: Անհաջող մնկնարկից հետո վերջացնում գերազանց հանդես եկավ Սմբատ Լոռուսյանը, որն իրար հետեւից հաղթանակներ տանելով ինչ մնաց մտներ բաղձալի եռյակ: Վերջին տարում նա առավելության հասավ Վրաստանի ներկայացուցիչ Ջանջղավայի նկատմամբ: Լոռուսյանը եւ Միհասյանը երեք առաջատարներին զիջեցին ընդամենը կեսական միավորով, սակայն նրանք նույնիսկ հանդես կգան երեւանում կայանալիք աշխարհի առաջնության միջմրցային մրցաշարում իրրեւ տանտերեր: Եզրափակիչ 9-րդ տարում իր հաշվին հաղթական միավոր գրանցեց Վիգեն Միրումյանը, որը առավելության հասավ Գեորգիոսի (Կիպրոս) նկատմամբ:

Ասեն Եղիազարյանը միավորը կիսեց Սուդաստվիլու (Վրաստան) հետ: Վերջինս վաստակեց 5 միավոր եւ լրացրեց միջազգային վարպետի նորման: Իսկ Վիգեն Միրումյանի արդյունքն է 4,5 միավոր, որն իր հերթին լրացրեց ՖԻԴԵ-ի վարպետի նորման: Հայաստանի տղամարդկանցից հետ չմնացին կանայք: Վերջին տարում Լյուդմիլա Ավանյանը եւ Էլինա Դանիելյանը միավոր կիսեցին համապատասխանաբար Լոմինեյշվիլու եւ Գուրիելիի հետ նրկոսն էլ Վրաստան): Արուսյակ Գրիգորյանը հաղթեց Ալբանիայի ներկայացուցիչ Շաբանին: Կանանց մրցաշարի միանձնյա հաղթող դարձավ Լոմինեյշվիլին: Ավանյանը եւ Դանիելյանը, վաստակելով 5,5-ական միավոր, 5-9-րդ տեղերը բաժանեցին Նիկոլինի, Մախմոդովիչի եւ Ջանջղավայի հետ: Միջմրցային 3 մրցաշրջանի տեղերին որոշելու համար նրանց միջեւ կանցկացվի լրացուցիչ մրցաշար, որը հունիսի 20-ին կկայանա Բելգրադում կամ Երեւանում: Արուսյակ Գրիգորյանը վաստակեց 5 միավոր եւ լրացրեց ՖԻԴԵ-ի վարպետի նորման:

ԹԵՆԻՍ

Արանտա Սանչեսի հերթական հաջողությունը

ԳԵՐՄԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ
Նյույորք, Թրանսլեյշն

Հոմում եւ Բեռլինում ավարտվեցին բենիսի կանանց ու տղամարդկանց խոշորագույն մրցաշարերը: Հոմում, որտեղ նույն ԼիՒ մրցնում տղամարդիկ, հանդես էին գալիս գրեթե բոլոր ուժեղագույն բենիսիստները, բացառությամբ աշխարհի թիվ մեկ բենիսիստ Անդրե Ագասու: Այսօր հենց սկզբից բազմաթիվ անակնկալներ եղան: Եզրափակիչ դուրս եկան ավստրիացի Թոմաս Մուստեր եւ իսպանացի Սերխի Բրուգերան: Հաջողությունն ուղեկցեց Մուստերին:

Բեռլինում փայլուն հանդես եկավ Արանտա Սանչեսը, որն ընթացիկ մրցաշրջանում գտնվում է լավ մարզաձիճակում: Սանչեսը եզրափակչում հաղթեց Մալեեւա Ֆերերից Մագդալենային:

Այս տարվա փետրվարի 6-ին Արանտա Սանչեսը բենիսի համաշխարհային դասակարգման ցուցակում, երկանգով Շտեֆի Գրաֆին, դուրս նկավ առաջին տեղ: Հիշ է, դա կարճատեւ եղավ, քանի որ Գրաֆը վերադառնալով առաջատարզ, երկրի իրեն վերադարձեց առաջին տեղը, սակայն 20-ամյա Արանտա Սանչեսը այսօր մնում է Շտեֆի Գրաֆի գլխավոր մրցակիցն ու մեծագույնի տիտղոսի երեք հարցում: Մինչեւ հիմա 6 բենիսիստուհիներ են գլխավորել WTA դասակարգման ցանկը: Առաջինը Մարտինա Նավրատիլովան էր, որը 331 շաբաթ գլխավորեց ուժեղագույնների ցուցակը: Դա առ այսօր անգերազանցելի ռեկորդ է: Սակայն աներեւակայելի է թվում, որ 331 շաբաթ գլխավորելու ռեկորդը դասկանում է Շտեֆի Գրաֆին, որն անընդմեջ 186 շաբաթ գլխավորել է համաշխարհային դասակարգման ցուցակը: Մարտինա Նավրատիլովային հաջորդել է երկա Էվերտ Լլոյդը (262 շաբաթ):

Արանտա Սանչես-Վիկարիո

Էվերտը հավասարել չկարողացավ եւ հաջորդաբար գլխավորում էին աշխարհի ուժեղագույնների ցուցակը 1987 թ. Շտեֆի Գրաֆը առարեց եկավ գահը նրանցից առնելու: Նա ընդհանուր ժամկետով զիջում է միայն Մարտինա Նավրատիլովային (283 շաբաթ): Անընդմեջ ուժեղագույնը կոչվելու Շտեֆի Գրաֆի ռեկորդը տագնապ է եւ տղամարդկանց մեջ նույն նման ցուցանիշ չկա: Այսօր առաջին տեղ դուրս գալու լավ հնարավորներ ունի նաեւ Ֆրանսիացի Մարի Պիերը: Գնալով մրցակցությունն ուժեղանում է:

ԽԱՁԱՆԿԱՐ

Ս. Հովհաննիսյանի թիմը 2-րդ տեղում

Ռուսաստանի բարձրագույն խմբի առաջնության 7-րդ տուրի արդյունքները.

«Դինամո» Մ-ԲԿՄԱ	3-1
«Սպարտ.» Վլ.-«Լոկոմոտիվ» Մ	0-1
«Սպարտակ» Մ-«Ռոստր»	1-2
«Տորպեդո»-«Ժեմչուժինա»	3-0
«Ռոստսելմաշ»-«Շերեմետեւո»	0-2
«Լոկոմոտիվ» Նն-«Տեխսիլչիկ»	2-1
«Դինամո Գազ.»-«Ուրալմաշ»	0-2
«Կամազ»-«Կրիլյա Սովետով»	1-0

Մոսկվայի «Դինամոն» փոքրաթիվ մարզիչ Կոնստանտին Բեսկովի գլխավորությամբ 7-րդ անընդմեջ հաղթական տարավ եւ զգալիորեն առաջ անցնելով մրցակիցներից, վստահորեն գլխավորում է մրցաշարային աղյուսակը: «Դինամոյի» ամենամոտակա մրցակիցը Սարգիս Հովհաննիսյանի թիմն է՝ Մոսկվայի «Լոկոմոտիվը», որն առաջատարին զիջում է 5 միավորով: Շարունակում է անհաջող հանդես գալ Ռուսաստանի եռակի չեմպիոն Մոսկվայի «Սպարտակը», որը 3-րդ պարտությունը կրեց առաջնությունում:

Մայլլ Ջորդանի թիմը դուրս մնաց

Ավարտվում է ԱՄՆ-ի պրոֆեսիոնալ բասկետբոլի (NBA) հերթական առաջնությունը: Արեւմտյան եւ արեւելյան կոնֆերենցիաներում ավարտվեցին կիսաեզրափակիչ հանդիպումները, եւ արդեն սկսվել են եզրափակիչ մրցավեճերը: Արեւմտյան կոնֆերենցիայում NBA-ի նախորդ առաջնության հաղթող «Հյուսթոն» թիմը սեփական հարկի տակ մեծ դժվարությամբ, այն էլ 1 միավորի տարբերությամբ՝ 94-93 հաշվով հաղթեց «Սան Մարինո» թիմին: Հանդիպման ավարտին ընդամենը 6,5 վայրկյան էր մնում, երբ «Հյուսթոնի» հարձակվող Ռոբերտ Օ-լին 3 միավորանոց պնդրեմ նետում կատարելով հաղթանակ բերեց իր թիմին: Արեւելյան կոնֆերենցիայում եզրափակիչ զույգը կազմում են «Օռլանդո» եւ «Ինդիանան»: Մասնագետները նախապատվությունը տալիս են Շաիլ Օ'Նիլի թիմին՝ «Օռլանդոյին», որը կիսաեզրափակիչում 7 հանդիպումների արդյունքներով հաղթեց Մայլլ Ջորդանի թիմին՝ «Չիկագո Բուլզին»:

«Այաքսը» կրկին Եվրոպայի ուժեղագույն ակումբն է

UEFA CHAMPIONS LEAGUE

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում տեղի ունեցած Չեմպիոնների լիգայի «Այաքս»-«Միլան» եզրափակիչ հանդիպումը ֆուտբոլային իսկական ներկայացում էր, որը գեղագիտական մեծ հաճույք պատճառեց մարզասերներին: Այդ երկրներից Վիեննա էին ժամանել շուրջ 40 հազար ֆուտբոլասերներ: Խաղին ներկա գտնվողներից հազարը միայն լրագրողներ էին: Ավստրիացիները 17 հազարական տոմս հատկացրել էին հոլանդացի եւ իտալացի ֆուտբոլասերներին: Չեմպիոնների լիգայի մրցաշարում բոլորից շատ հաղթել է Մադրիդի «Ռեալը», որը 6 անգամ տիտղոսակիր է դարձել: 5 անգամ հաջողությունն ուղեկցել է «Միլանին»: Ֆաբիո Կապելլոյի գլխավորությամբ «Միլանը» 3-րդ անգամն էր դուրս եկել եզրափակիչ: «Այաքսը» վաղուց չէր արժանացել եվրոպական ակումբային մրցաշարերի հաղթողի կոչմանը: Տարեց ֆուտբոլասերներն շատ լավ են հիշում Յոհան Կրույֆի ժամանակների «Այաքսը», որն իր տրամ խաղաոճով 1971, 1972, 1973 թթ. իրար հետեւից 3 անգամ նվաճեց եվրոպական երկրների չեմպիոնների գավաթը: Սակայն դա վաղուց արդեն հուշ է դարձել: Եվ ահա «Այաքսը» նոր վերածնունդ է ապրում: Հոլանդական այս հեղինակավոր թիմը միակն էր Չեմպիոնների լիգայի վերջին խաղարկություններում, որը ոչ մի պարտություն չէր կրել: Դեռ ավելին, «Այաքսը» «Միլանին» Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում հաղթել էր 2 անգամ եւ այն էլ 2-0 հաշվով: Եզրափակիչ խաղում էլ «Այաքսն» առցուցեց իր առավելությունը իսկական տիտղոսակիր թիմի նկատմամբ: Հանդիպման հիմնական ժամանակի ավարտին ընդամենը 7 րոպե էր մնում, երբ երեսաստղ Պատրիկ Կլյույվերտը, ճեղքելով պաշտպանությունը, բաղդի բերմունքով գրավեց եվրոպայում ամենաուժեղ պաշտպանությունն ունեցող «Միլանի» դարպասը եւ 1-0 հաշվով հաղթական բերեց «Այաքսին»: «Այաքսի» վետերան Յոհանես Ռիյկաարդը 3-րդ անգամ դարձավ եվրոպական երկրների չեմպիոնների գավաթակիր: Ուշագրավ է, որ նա 2 անգամ այդ հաջողությանը հասել է հենց «Միլանի» կազմում: Այսօր «Այաքսը» հիրավի ոչ միայն Եվրոպայի, այլեւ աշխարհի ուժեղագույն թիմերից մեկն է: «Այաքսի» տոտալ ֆուտբոլը շարունակվում է: Նրա հարձակողական խաղաոճը մեծ հաճույք է պատճառում ֆուտբոլի իսկական սիրահարներին: Թիմը երիտասարդ է, խաղացողների միջին տարիքը կազմում է 22: Ամենագլխավորն այն է, որ «Այաքսը» հիմնականում համալրված է իր սեփական կադրերով: Թիմի կազմում հանդես են գալիս «Այաքս» ֆուտբոլային ակումբի դպրոցի 8 սաներ: Այսօր աշխատանքն այնքան բարձր մակարդակով է կազմակերպված, որ դպրոցը վերածվել է ֆուտբոլային կադրերի պատրաստման իսկական դարբնոցի: Համաշխարհային ֆուտբոլը շատ է փոխվել: Զարմանալու ոչինչ չկա: Չէ՞ որ ֆուտբոլը վաղուց մեծ բիզնես է դարձել եւ բարձրակարգ խաղացողներ պատրաստելն ու վաճառքը շատ եկամտաբեր է: Մեր ակումբներն նույնպես պետք է օրինակ վերցնեն եվրոպական առաջատար ակումբներից: Հույսը չպետք է դնել որիշ մարզադպրոցների վրա, այլ հարկավոր է ստեղծել սեփականը: Դա է ֆուտբոլի զարգացման ճանապարհը: Առաջինն առձագանքում է «Արարատ» ակումբը, որն ոգում է իր սեփական կադրերի պատրաստման դպրոցն ունենալ:

ԱՐԱՐԱՏ ՅՈՒ

«ԱՐԱՐԱՏ» ֆուտբոլային ակումբը հայտարարում է մրցույթ-ընդունելություն

«Արարատ» մանկապատանեկան ֆուտբոլային մասնագիտական կենտրոնում ուսանելու համար: Ընդունելությանը կարող են մասնակցել 8-16 տարեկան պատանիներ, որոնք չունեն ժառանգական կամ ձեռքբերած խրոնիկական հիվանդություններ:

Առաջարկում ենք լրացնել այս հայտաթերթիկը եւ ուղարկել հետեւյալ հասցեով.

Երեւան 375010, փոստարկղ թիվ 359.

Հեռախոսներ՝ 58.15.43, 52.21.73: Զանգահարել ժամը 16-20-ը:

ՀԱՅՏԱԹԵՐԹԻԿ
«ԱՐԱՐԱՏ» ՅՈՒ սաճի

Ազգանուն, անուն, հայրանուն _____

_____

Ծննդյան թիվ _____ ամիս _____ տ. _____

Դպրոց N _____ դպրոցի գտնվելու վայրը _____

Հասակը (սմ) _____ քաշը (կգ) _____

Հայր՝ ծննդյան թիվ _____ հասակը (սմ) _____

Մայր՝ ծննդյան թիվ _____ հասակը (սմ) _____

Հասցե _____ հեռ. _____

«Արարատ» ֆուտբոլային ակումբը հայկական ֆուտբոլի մեծ հովանավոր, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվավոր նախագահ Հակոբ Աղաջանի Տոնոյանի մահվան կապակցությամբ խորին ցավակցություն է հայտնում հանգուցյալի հարազատներին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐՎԱ ՀԵՏՔԵՐՈՎ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ադրբեջանը վերադարձրել է գերիների չնչին մասին

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԱՆ

Վերադարձնելով իր տարածքում գտնվող ադրբեջանցի բոլոր ռազմագերիներին, Հայաստանը միջազգային օրենքների եւ իրավունքի տեսակետից օրինակելի բայ կատարեց ամբողջ կովկասյան տարածաշրջանի համար: Այս մասին մայիսի 24-ին Ժնեւում լիսի տասը տեղի ունեցած մամուլի ասուլիսում հայտարարեց Պատանդների իրավունքների ոլսեցոլսեւության ֆոնդի գործադիր տնօրեն Լարիսա Ալավերդյանը: Նա հայտնեց նաեւ, որ Ադրբեջանի կողմից վերադարձված 35 գերիներ չնչին մասն են այն հայերի, որոնց ադրբեջանցիները ցուցադրել են Բաքվի միջազգային Կարմիր խաչի ներկայացուցիչներին: Բազմաթիվ գերիներ դեռեւս գտնվում են Ադրբեջանի Ազգային անվտանգության, Շուշիլյան, Վավիլովյան, Գյանջայի բանտերում, ինչպես նաեւ բարեուներում եւ Սումգայիթի հիմնական վերատար գործարանում: Նրանց մինչեւ ուժասղառության աստիճան օգտագործում են որպես ծրի ուժեւոսուժ: Չնայած ամենատկտիվ ջանքերին, Ադրբեջանն այդպես էլ չի վերադարձրել նաեւ 16 տարեկանը բանտարկության մեջ բոլոռած Ջավեն Ռամազանյանին: Ի դեղ, վերադարձնելով 35 հայ ռնոզ մագերիներին, Ադրբեջանը ողղակի փորձում էր առյագուցել, որ գերել է հայասատանցի զինվորների: Մինչդեռ գերիների ճնշող մեծամասնությունը առեւանգվել է գնացքներից կամ իրենց բնակավայրերից, այլ ոչ թե մարտադաշտերից:

«Տարօրինակ է, որ միջազգային Կարմիր խաչի Բաքվի առաքելությունը հաճախ է առել ադրբեջանցի 4 հազար անհետ կորածների որոնումն այն դեղքում, երբ մենք նրանից ակնկալում էինք, որ գործնական աշխատանք կսկսի վերադարձնելու գոնե այն հայ գերիներին, որոնց գտնվելու վայրը հայտնի է (տարբ 60 հոգի): Չէ որ դա նրանց անմիջական պարտականությունն է, ասաց տիկ. Ալավերդյանը: Մինչդեռ այդ առաքելությունը ձգտում է արժանանալ ադրբեջանցիների բարեհաճ վերաբերմունքին եւ որոնել հնարավի «4 հազար անհետ կորածների»:

Տարօրինակ է նաեւ միջազգային Կարմիր խաչի երեւանյան գրասենյակի վերջերս առած հայտարարությունն այն մասն, թե գերիների վերջին փոխանակությամբ գործ կարելի է ավարտված համարել, բանի որ ադրբեջանական բանտերում գտնվող դարաբաղցի շուրջ 1000 կալանավորներ Ադրբեջանի հաղաքացիներ են: Նրանք դասադարտված են Ադրբեջանի հրեական օրենքներով: Այդ պատճառով էլ միջամտել հնարավոր չէ: Սակայն իրականում Ժնեւյան կոնվենցիաները եւ դրանց օժանդակ փաստաթղթերը խոսում են այն մասին, որ միջազգային իրավունքի նորմերի պատասխանության տակ են գտնվում բոլոր նրանք, ովքեր տուժել են հայ-ադրբեջանական հակամարտության սկզբից ի վեր: Պատանդների իրավունքների պաշտպանության խորհրդի անդամ, հոգեբույժ Լիլիթ Վասիլյանը հայտնեց, որ վերադարձված հայ գերիների մեջ կան ծանր հիվանդներ: Օրինակ, նրանց բոլորի մոտ հայտնաբերվել է արյան ախիտակության խիստ պակասություն: Դրա հետեւանքով նրանց ոտների շրջանում առաջացել են այտուցներ: Նրանցից մի հանիսի մոտ կան այրվածքներ եւ վնասվածքներ, որոնց առաքինման համար օրգանիզմը չունի բավարար ռեսուրսներ: Գերիներից ոմանց մոտ հայտնաբերվել են նաեւ ողեղային հիվանդություններ:

Գերագույն խորհրդի պատգամավոր Միհայել Արամյանը բարեգործական կազմակերպություններին կոչ արեց ուշադրություն դարձնել հայերիիզ վերադարձած հայորդիների սոցիալական կարիքներին: Նրանց ընտանիքներն այսօր ծայրահեղ աղքատության եզրին են գտնվում: ■

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԵԱՀԿ զինվորական պատվիրակները Ղարաբաղում

Մայիսի 25-ին կարճաժամկետ այցով Ստեփանակերտ ժամանեց ԵԱՀԿ բարձր մակարդակի պլանավորման խմբի զինվորական պատվիրակությունը՝ ֆինն գեներալ Հեկկի Վիկնի գլխավորությամբ: ԼՂՀ արգործադադարից ստացված տեղեկությունների համաձայն, Լեռնային Ղարաբաղի հաղաքագիական եւ զինվորական դեկավարության եւ պատվիրակության անդամների հանդիպումներում նախատեսվում է համատարության գոտում միջազգային խաղաղարար ուժերի հնարավոր տեղաբաշխմանն առնչվող հարցերի քննարկում:

Հաղորդվում է նաեւ, որ հակամարտ կողմերից ամեն գոտում տեղակը ռազմական դաշտերը ուսումնասիրելու եւ հետախուզելու նպատակով, ԵԱՀԿ ռազմական մասնագետները պատրաստվում են այցելել ճակատային գծի մի շարք հատվածներ:

ՆԱՐԻՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մինչեւ ս. թ. մայիսի 30-ը Երեւանում է գտնվում աուեւտի խոհանոցային ծառայման գործող եգիպտական կենտրոնի գլխավոր տնօրեն, Եգիպտոսի Ռամադան 10 հաղաքի արդյունաբերողների միության նախագահ Աբդել Սաթթահ Դոհերին: Նա պատրաստ է ընդունել բոլոր գործարարներին, որոնք ցանկանում են առեւտրական կապեր հաստատել եգիպտոսի հետ, եւ որոնք հետաքրքրվում են եգիպտական առեւտրի կենտրոնում ցուցադրված ապրանքներով: Հանգեք Հայկա Քոչար 4, 33 թեքեւ արդյունաբերության նախարարությունը, 1-ին հարկ: Հեռախոս 56-94-26, ժամադրության համար, «Արմենիա» հյուրանոց թիվ 426 սենյակ, ժամը 10-14-ը:

ՀԱՄԱՌՈՏ

Գրոզնիում սկսվեցին բանակցություններ

ԵԱՀԿ-ի հովանու ներքո Չեչնիայի հակամարտության խաղաղ կարգավորման բանակցություններ են սկսվել մայիսի 25-ի առավոտյան Գրոզնիում այդ միջազգային կազմակերպության առաքելության շենքում: Բանակցություններին մասնակցելու են ժամանել Չեչնիայի գործադիր իշխանության համաղեկավար մարմինների տարածքային վարչության դեկավար Նիկոլայ Սեմյոնովը եւ Չեչնիայի ազգային համաձայնության կոմիտեի դեկավարի տեղակալ Լեչա Սագամադովը: Դուդաեւի կողմնակիցների պատվիրակությունը գլխավորում է Ուսման Իմաեւը, որը Դուդաեւի վարչակազմում գլխավոր դատախազն է: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում Լեչա Սագամադովը հայտարարել է. «Մենք պատրաստ ենք ընդառաջ գնալու ամեն մի նախաձեռնության, որը թեկուզ նվազագույն չափով կնպաստի ողջ չեչեն ժողովրդի համար կործանարար պատերազմի դադարեցմանը»: Սակայն, բանակցությունների նախօրեն պատրաստված որեւէ համադրույթ ազգային համաձայնության կոմիտեն չունի, նշել է Սագամադովը: Նրա կարծիքով, առաջնահերթ խնդիրը մարտական գործողությունների դադարեցումը եւ աղօրինի կազմավորումների զինաթափումն է: ԱՐՄԵՆՊՐԵՍ

Քլերիդեսը դժգոհ է, Դենբաըը՝ գոհ

Լոնդոնում ավարտվեցին Կիպրոսի հարցի կարգավորման ուղղությամբ կողմ եւ հակառակ երկու համայնքների ղեկավարների հանդիպման աշխատանքները: Մինչ հանդիպման ավարտը հունական համայնքի ղեկավար Քլերիդեսը հայտարարեց, որ «բանակցությունները ոչնչի չեն հանգեցնի»: Իսկ Ռաուֆ Դենքթաշը ասաց, որ «թուրքական կողմը հանդիպումներին դրականորեն է վերաբերվում եւ ընթացը գոհացուցիչ է»:

Կիրգիզիայում կանխատեսում են ուժեղ երկրաշարժեր

ԲԻՇՔԵԿ, 25 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ ԻՄՊՐԵՍ: Կիրգիզիայի սեյսմագիտության ինստիտուտում ավարտվեց հանրապետության սեյսմիկ շրջանցման նոր քարտեզի կազմումը, որը կփոխարինի նախորդին՝ 1978 թ. կազմվածին: Մասնագետների կանխատեսումներն այնքան էլ մխիթարական չեն: Ինչպես հայտնեց ինստիտուտի տնօրեն Ջոլդոշ Մամիրովը, երկրի փաստորեն ամբողջ տարածքում մոտ ժամանակներս հնարավոր են 8 բալանոց երկրաշարժեր:

ԱՐՄԱՒՆԴ
ԿԵՆՏՐՈՆԸ

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է
հնգօրյա ճանապարհորդության դեպի
Հնդկաստանի մայրաքաղաք:

ԵՐԵՎԱՆ - ԴԵԼԻ - ԵՐԵՎԱՆ

Հերթական ուղիղ չվերթը կկայանա
հունիսի 24-ին

Շուտևորության ընթացքում ինքնաթիռը մնում է Դելիում)

«Էրեբունի» հյուրանոց, I մասնաշենք, 301-307 ս.

Հեռ. 52-75-65, 56-13-92, 56-05-79

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ադրբեջանից փորձում էին Չեչնիա փոխադրել «Գրադ» կայանք

ԴԵՐԲԵՆԴ, 25 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ ԻՄՊՐԵՍ: Մոդեմ չորրոդ ամիսն է, ինչ ոռճիկ չեն ստանում ռուս ադրբեջանական սահմանում ծառայող սահմանապահները: Ցասեր է նաեւ դարենի ու վառելիքի մասակարարման հետ կապված իրավիճակը: Միջդեռ, ինչպես հայտնի դարձավ ԻՄԱդրեսին, որոշ ձեռներեց առեւտրականներ ծրենական առանց սակագնի բաց բողնելու համար զինծառայողներին առաջարկում են 2,5-10 դոլար կանխիկ ռոպլի: Չեն դադարում նաեւ սահմանով անօրինական կարգով զենք ու զինամթերք անցկացնելու փորձերը: Այսդես, անցյալ շաբաթ ռուս սահմանապահները ապտռավեցին «Գրադ» կայանք, որը դեսք է Ադրբեջանից փոխադրվեր Չեչնիա:

ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ

1995 թ. մայիսին Հայաստանը եւ Ղարաբաղը դարձան միջազգային «Ինտերֆլորա» կազմակերպության 143-րդ անդամ երկիրը, որին նվիրված մայիսի 28-ին ժամը 17:50-ին հայկական հեռուստատեսությամբ կարող եք դիտել մայիամեկյան «Բրաբիոնը խաղաղության ծաղիկ» միջազգային մրցույթ-փառատոնի տեսագրությունը: Մրցույթի մասնակիցները հրեա, արաբ, աբխազ, վրաց, չեչեն, ռուս, ադրբեջանցի, հայ ժողովուրդների մշակույթի հանրահայտ գործիչներն էին, որոնց թվում այնպիսի սիրված դեմքեր, ինչպիսիք են Մախմուդ Էսամբաեւը, Լիդիա Շուկբինան, Արկադի Վայները, Վսանիսլավ Սադալսկին, Վլադիմիր Բերեզինը, Կոտե Մախարաձեն, Սոֆիկո Քիաուրելին եւ այլոք:

BRABION FLORA SERVICE

ՏՐՅԱԼ

«Մխեդրիոնին» հանձնեց ամբողջ զենքն ու տեխնիկան

Վրաստանի բոլոր շրջաններում տեղակայված «Մխեդրիոնի» կողմից տեղական բաժանմունքներ հանձնել են ամբողջ զենքն ու տեխնիկան կատարելով պետության նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հրամանագիրը եւ խորհրդարանի համապատասխան որոշման պահանջը: Մամլո ասուլիսում հատուկ ստեղծված խորհրդարանական ժամանակավոր հանձնախմբի նախագահ Օմար Էլոեվիչին հաստատեց, թե պատգամավորական նախաձեռնություններ հանձնված հրաձգորների թիվը համապատասխանում է կարգուսի կողմից մինչ այդ նեղկայացված ցուցակներին: Սակայն Կախեթիայի Սագարեջոյի շրջանում Թբիլիսիից 60 կմ հեռու, մխեդրիոնականները դադարեցրել են հանձնման գործընթացը: Նրանք առաջ են քաշել Բոսելիանիի պատգամավոր վերջնագիրը. զենքը կհանձնվի միայն այն բանից հետո, երբ ռահկանությունն ազատ արձակի միայն զենք կրելու համար ձեռնակալված մխեդրիոնականներին: Կարգադուսի դեկավարությունը պնդում է, թե կազմակերպության ոչ բոլոր անդամներին կարելի է մեղադրել բեւական հանցագործությունների կատարում: Այնուհանդերձ, ձերբակալվել էին գրեթե բոլորը, այդ թվում նաեւ զենք կրելու համար, որի իրավունն են ունեցել ընդհատ մինչեւ պետության դեկավարի նոր հրամանագիրը: Ենթադրվում է, որ մոտ տասնաձուրջանակներում զենքի հանձնման ժամանակ կազանավորումներ եւ ձերբակալություններ չեն եղել: Հանձնախմբի կարծիքով, այդ վերջնագիրը չի բնդունվելու, 1448 ավտոմատ երկար չեն տադալի:

Ադրբեջանից վտարվել է 1500 ընտանիք

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ ԻՄՊՐԵՍ: Ադրբեջանից վտարվել է 1500 ընտանիք, որոնք ապաստան են գտել Հայաստանում: Այս մասին հայտնեց Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչ Ռուբեն Ղազարյանը: Նրա խոսքով, վտարվածների մեծ մասը հաստատվել է Արարատի մարզում, մնացածները՝ Երեւանում եւ Արագածոտնի մարզում:

«Գարեբական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Աոռսլավլեւսց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1846 Տպաքանակը 7000 Ստորագրված է տպագրության 25. 05. 1995. Գինը 40 դրամ

digitised by A.R.A.R.@